

**Իրավունքների Պաշտպանություն Առանց Սահմանների  
Հասարակական Կազմակերպություն**

**Հետազոտություն**

**Հանրային պաշտպանների և հանրային  
պաշտպանի գրասենյակի կարիքները**

## Ներածություն

Սույն հետազոտությունն իրականացվել է 2013թ. փետրվարին, երբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների մի մասը նոր էր ուժի մեջ մտել: Սա նշանակում է, որ պրակտիկայի՝ օրենքի փոփոխություններով պայմանավորված բարելավումներն ու ռիսկերը ամբողջ ծավալով չէին կարող արտացոլվել հետազոտության արդյունքներում:

Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի կարիքների գնահատման հետազոտությանը մասնակցել են 8 հանրային պաշտպաններ և գրասենյակի ղեկավարը: Վերջիններիս հետ անհատական հարցազրույցներ են իրականացվել կիսաձևայնացված հարցաշարի միջոցով: Եվս երկու հանրային պաշտպաններ գրավոր պատասխանել են էլ. փոստի միջոցով ուղարկված հարցաթերթերի հարցերին:

Կիսաձևայնացված հարցաշարը բաղկացած էր հետևյալ բաժիններից.

1. Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը
2. Պաշտպանների ծանրաբեռնվածության խնդիրը
3. Գործունեության ծավալման խոչընդոտները
4. Պաշտպանության որակ և հանրային վստահություն
5. Ուսուցում և կարողությունների զարգացում
6. Այլ առաջարկներ, լրացումներ

Էլ. փոստի միջոցով տարածված հարցաթերթում հիմնականում շեշտադրված էին հանրային պաշտպանների կրթական կարիքներին վերաբերող հարցերը:

Ստորև ներկայացված է հետազոտության արդյունքների վերլուծությունը՝ ըստ առավել ակտուալ հիմնախնդիրների: Վերլուծության տեքստը չծանրաբեռնելու համար ներառված չեն այն խնդիրները, որոնք հանրային պաշտպանները չեն դիտարկել որպես հիմնախնդիրներ կամ դրանց առնչությամբ կարիքներ չեն մատնանշել:

### **Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը**

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության խնդիրը, թերևս, ամենաակտուալներից մեկն է և առավել հաճախ մատնանշվածը: Պաշտպանների ծանրաբեռնվածության աստիճանը պատկերավոր նկարագրված է հարցազրույցի ընթացքում արտահայտված հետևյալ դատողությամբ. *«Մի հանրային պաշտպանն ունի 20 քրեական գործի վարույթ: Ինքը արդեն ավտոմատ աշխատանք է կատարում. զանգում են, վազում է զինվորական դատախազության քննիչի մոտ, ստորագրում է, վազում է ՔԿՀ, հանդիպում է պաշտպանյալի հետ, վազում է ոստիկանություն, որովհետև մարդ են բերման ենթարկել: Այդ ծանրաբեռնվածության պայմաններում հնարավոր չէ կատարել որակյալ աշխատանք: Եթե նայենք փաստաբանության էթիկայի կանոնակարգության օրենքը, փաստաբանը պարտավոր է վերցնել այնքան գործ, որքան որ ինքը կարող է վարել»:*

Թեև ոչ բոլոր հանրային պաշտպաններն են համաձայն այն կարծիքի հետ, որ ծանրաբեռնվածությունն ազդում է գործերի վարման որակի վրա, սակայն այս բացասական ազդեցությունն անխուսափելի է: Ինչպես վկայում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի մշտադիտարկման փորձը, հանրային պաշտպանները շատ դեպքերում չեն հասցնում նախապես ծանոթանալ գործի նյութերին: Դրանք հապճեպ ընթերցվում են առաջին նիստի ժամանակ՝ դատարանում կամ էլ դատարանի կողմից տրամադրված ընդմիջման ժամանակահատվածում:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության գլխավոր պատճառներից մեկը նախկինում անվճարունակության հստակ չափանիշների բացակայությունն էր: Անվճար իրավաբանական օգնությունը դեպքերի մեծամասնությունում տրամադրվում էր ոչ խտրական կերպով: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով թեև հստակեցվել են մի շարք չափանիշներ, սակայն, էականորեն ընդլայնվել են անվճար իրավաբանական օգնության շրջանակները: Այսպես,

- Օրենքի փոփոխություններով ավելացվել են մի շարք սոցիալական խմբեր, որոնց ևս պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրվի: Դրանց շարքում են 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, դատապարտյալները, գործազուրկները, միայնակ բնակվող կենսաթոշակառուները (անկախ վերջիններիս գույքային դրությունից) և այլն:

- Օրենքի փոփոխություններով հանրային պաշտպանները պետք է տրամադրեն նաև իրավական խորհրդատվություն, ինչը նախատեսված չէր նախկինում:
- Վերջապես, հանրային պաշտպանները պետք է այսուհետ ներկայացուցչություն կամ պաշտպանություն ապահովեն քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված է, որ անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել հոդվածի 5-րդ մասում նշված անձանց, առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Թեև, առաջին հայացքից, այս վերապահումը հավասարակշռող դեր պետք է ունենար՝ նվազեցնելով անվճար իրավաբանական օգնության ենթակա անձանց շրջանակը, սակայն օրենքում սահմանված չեն ինչպես

- անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալների տեսակները և վճարունակության գնահատման հստակ չափանիշները,
- այնպես էլ՝ «անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ» հայտնաբերելու իրավասությամբ օժտված մարմինը և համապատասխան մեխանիզմը:

Որպես հետևանք, յուրաքանչյուր ֆիզիկական անձ, ով դիմում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար, գրեթե միշտ ստանում է այդ օգնությունը: Այս կապակցությամբ հանրային պաշտպաններից մեկը նշել է. *«Մարդը երբ ասում է, որ ինքը փող չունի պաշտպանի ծառայություններից օգտվելու, ոչ մի ձև չկա դրան հակադարձելու: Իսկ Եվրախորհուրդը ստիպում է Հայաստանի Հանրապետությանը, որպեսզի գոնե քրեական գործերով պարտադիր պետք է հանրային պաշտպան տրամադրվի»:*

Ըստ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, անձի վճարունակ կամ անվճարունակ լինելու հանգամանքը պարզում է վարույթն իրականացնող մարմինը: Սակայն, որպես կանոն, վարույթն իրականացնող մարմինը թե՛ ժամանակի սղության, թե՛ ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու պատճառով չի կարողանում կամ խուսափում է անձի անվճարունակությունը ժխտող տվյալներ հավաքել և բավարարում է օգնության պահանջը: Ինչպես նշել է հանրային պաշտպաններից մեկը. *«Մի քիչ դժվար է*

*ստուգելը պրակտիկայում, դեռ չունենք այդպիսի կոնկրետ չափանիշներ, որ պետք է սա ստուգել, նա ստուգել: Մինչև քննիչը որոշի այդքանին ստուգել... այստեղ ժամանակի խնդիր էլ կա: Գործընթացը դժվարանում է: Պետք է պաշտպանով ապահովի կամ ընկնի ինչ-որ այդպիսի տվյալներ հավաքելով, իսկ այնտեղ էլ ժամկետի խնդիր կա, չէ՞»:*

Այսպիսով, օրենքի փոփոխությունների արդյունքում այդպես էլ չի սահմանվում այն մեխանիզմը, որով պետք է պարզվեր անձի իրական անվճարունակության հանգամանքը: Որպես հետևանք, հանրային պաշտպանների՝ առանց այդ էլ բարձր աշխատանքային ծանրաբեռնվածությունն էլ ավելի կաճի:

Հետազոտությանը մասնակցած հանրային պաշտպանները նշել են, որ օրենքի նոր փոփոխություններից հետո իրենց ծանրաբեռնվածությունն էականորեն չի ավելացել: Մյուս կողմից, ծանրաբեռնվածության աճը անխուսափելի է համարվել, քանի որ հանրային իրազեկվածության մակարդակը դեռևս ցածր է և քաղաքացիական ու վարչական գործերով դիմումները քիչ են. *«Քանի որ մեկ ամիս է անցել, դեռ չենք զգացել ծանրաբեռնվածություն, բայց կարծում եմ, որ մի քանի ամիս հետո ծանրաբեռնվածությունը կավելանա, քանի որ բնակչությունից շատերը չգիտեն այս նոր փոփոխությունների մասին»:*

Հանրային պաշտպաններից մի քանիսը նշել են, որ օրենքի փոփոխությունները գրեթե չեն անդրադարձել իրենց աշխատանքային ծանրաբեռնվածության վրա, քանի որ իրենք զբաղվում են միայն քրեական գործերով: Ինչպես նշել է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, ներկայումս քաղաքացիական և վարչական գործերը վարում է պաշտպաններից մեկը, ինչի շնորհիվ մյուս պաշտպանների ծանրաբեռնվածության մեջ քաղաքացիական և վարչական գործեր դեռևս չեն ներառվում: Մյուս կողմից, ըստ գրասենյակի ղեկավարի, *«գրասենյակին պետք է անպայման նոր հաստիքներ տրամադրվեն, որոնք կգրադվեն միայն քաղաքացիական և վարչական գործերով»:*

Ճիշտ է, հանրային պաշտպանների թիվը ավելացել է 18 հաստիքի չափով, սակայն, ինչպես գրասենյակի ղեկավարն է նշել, *«... այդ համալրումը հազիվ կկարողանա լրացնել քրեական գործերի աճի տեղեկնցով եկած նոր գործերը: Այսինքն, քրեական գործերով ներկայիս ծանրաբեռնվածությունը պետք է իջեցնել, որպեսզի հանրային պաշտպանները հնարավորություն ունենան լիարժեք ծանոթանալ գործի նյութերին և*

*լիարժեք մասնակցություն ունենան գործերին: Աճի տենդենցը ստեղծման օրվանից անընդհատ կա, յուրաքանչյուր տարի 200-300 գործով ավելանում է»:*

Պաշտպանների ծանրաբեռնվածության մյուս խնդիրն առնչվում է պաշտպանների միջև գործերի ոչ հավասարաչափ բաշխմանը, ինչը, սակայն ունի օբյեկտիվ պատճառներ. *«Մի քանի հանրային պաշտպաններ երբեմն ամսվա ընթացքում մի քանի գործ են ունենում, իսկ մյուսները չեն կարողանում հասցնել լիարժեք կատարել իրենց աշխատանքը»:* Այստեղ օբյեկտիվ հանգամանք է հանդիսանում ՀՀ տարբեր տարածաշրջաններում քրեական գործերի ոչ հավասարաչափ բաշխվածությունը: Կան մարզային բնակավայրեր, որտեղ հանրային պաշտպանները, համեմատած իրենց մայրաքաղաքի գործընկերների, աշխատում են նվազ ծանրաբեռնվածությամբ:

### **Ոչ բավարար գրասենյակային պայմանները**

Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայիս տեղակայումը և տարածքը թույլ չեն տալիս գրասենյակում աշխատող փաստաբաններին պատշաճորեն կատարել իրենց աշխատանքային պարտականությունները: Գրասենյակի տարածքը փոքր է, պաշտպաններն առանձնացված աշխատասենյակների և նույնիսկ սեփական աշխատասեղանների կարիք ունեն: Մի շարք պաշտպաններ անգամ նշել են, որ *«... տանն ենք աշխատում՝ աշխատանքային ժամերից հետո, քանի որ գրասենյակում հնարավոր չէ աշխատել»:*

Հանրային պաշտպաններից մեկը նշել է. *«Բնականաբար, բոլորը կուզեն, որպեսզի ամեն հանրային պաշտպան կամ գոնե երկուսը, ունենան առանձնացված տարածքներ՝ աշխատանքային տարածք, որտեղ հնարավորություն կունենան անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել իրենց պաշտպանյալին կամ քաղաքացիական գործերով իրենց վստահորդներին: Դա անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք հանգիստ միջավայրում շփվենք կամ աշխատենք և ստիպված չլինենք այդ աշխատանքը տանը կատարել: Բնականաբար, տարածքի խնդիր կա»:*

Պաշտպանները նաև նշել են, որ մի աշխատասեղանի վրա աշխատում են 2-3 հոգով: Սակայն, քանի որ աշխատանքի բերումով հիմնականում դատարաններում կամ

քրեակատարողական հիմնարկներում են լինում և միաժամանակ գրասենյակում չեն լինում, ստիպված համակերպվում են:

Այնուամենայնիվ, ինչպես նշել են հանրային պաշտպանները և գրասենյակի ղեկավարը, այս խնդիրը լուծում պետք է ստանա մոտ ապագայում: Հանրային պաշտպանի նոր գրասենյակի շինարարությունը ներկայումս ընթացքի մեջ է և ծրագրված է ավարտել մինչև 2013թ. տարեվերջ:

Հանրային պաշտպաններից մեկը նշել է նաև անհրաժեշտ տեխնիկայով (համակարգիչ, տեսաձայնագրող և տպիչ սարքեր, տեղեկատվության կրիչներ) և գրականությամբ ապահովելու կարիքը:

### **Տրանսպորտային և տեղաշարժման խնդիրները**

Հանրային պաշտպանների կողմից կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը նախատեսված է հանրային պաշտպանի գրասենյակի բյուջեով, սակայն փոխհատուցման ենթակա է միայն հասարակական տրանսպորտի միջոցներով երթևեկության գումարը, այն էլ՝ համապատասխան կտրոնների ներկայացման դեպքում: Պաշտպաններն արձանագրում են, որ դրանք ձեռք բերելը պրակտիկորեն անհնար է: Մյուս կողմից, հասարակական տրանսպորտն առավել ժամանակատար է, ինչից ելնելով՝ պաշտպանները օգտվում են կամ սեփական փոխադրամիջոցներից, կամ տաքսիների ծառայություններից, որոնց վրա ծախսված գումարը չի փոխհատուցվում:

Տեղաշարժման ծախսերի փոխհատուցման համար յուրաքանչյուր պաշտպանի վեց ամիսը մեկ տրամադրվում է 30.000 ՀՀ դրամ: Բոլոր հանրային պաշտպանները նշել են, որ դա չնչին գումար է, քանի որ օրվա ընթացքում իրենք ունենում են միջինը 3-4 գործ, ինչն էլ ենթադրում է նվազագույնը 600-800 դրամի ծախս (այն պարագայում, եթե տեղաշարժվել են երթուղային տաքսիների և ավտոբուսների միջոցով): Հաճախ կարիք է լինում օգտվել տաքսիների ծառայություններից, քանի որ *«... ժամանակի խնդիր է լինում կամ գործի հատորներն են շատ, այսինքն՝ ձեռքի իրերը շատ ծանր են լինում, կամ էլ այն վայրը, որտեղ պետք է կատարվի քննչական այս կամ այն գործողությունը, կամ տեղի ունենա հարցաքննությունը, հասանելի չէ այլ տրանսպորտային միջոցներով»*: Հանրային պաշտպաններից մեկը նշել է նաև. *«Հիմա, օրինակ, գնում ենք բերդ (նկատի ունի Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկը), այստեղից տրասպորտ կա գնացող*

*մինչև Նուբարաշեն խճուղի, խճուղուց այնտեղ մի կիլոմետր – կիլոմետրուկես ճանապարհ է, ճանապարհն էլ շատ վատն է: Ենթադրենք մի քիչ ցեխոտ է լինում, մինչև հասնում ես այնտեղ, կոշիկներդ նենց ցեխ է լինում՝ փաստաբանի տպավորություն բնավ չես թողնում»:* Որոշ հանրային պաշտպաններ տաքսիների փոխարեն տեղաշարժվում են սեփական ավտոմեքենաներով, որոնց վառելիքի ծախսը նույնպես չի փոխհատուցվում:

### **Բջջային և ինտերնետային կապի ապահովումը**

Հանրային պաշտպանների մի մասը մատնանշել է նաև բջջային հեռախոսագրույցների ծախսերի փոխհատուցման խնդիրը: Որոշ իրավիճակներում հանրային պաշտպանները ստիպված են լինում անձնական բջջային հեռախոսներն օգտագործել շահառուների հետ զրուցելու համար: Այս ծախսերի փոխհատուցման մեխանիզմ նույնպես նախատեսված չէ:

Հատկապես մարզերում գործող պաշտպանների դեպքում ակտուալ է ինտերնետային կապի ապահովման խնդիրը: Սրա համար նույնպես փոխհատուցման ծախսեր նախատեսված չեն և հանրային պաշտպաններն իրենք են վճարում ինտերնետային կապի համար:

### **Հանրային պաշտպանների վարձատրությունը**

Հանրային պաշտպանության որակի վրա ազդող բացասական գործոն է նաև այն հանգամանքը, որ պաշտպանի վարձատրության չափը կախված չէ գործերի քանակից և պաշտպանության որակից (ինչը, իհարկե, դժվար է հստակ չափել): Գործերի տարբեր ծանրաբեռնվածություն ունեցող պաշտպանները վարձատրվում են ամրագրված՝ հավասար չափով: Բնականաբար, սա կարող է ազդել հանրային պաշտպանի աշխատանքային մոտիվացիայի և շահագրգռվածության վրա, ինչպես նաև՝ առաջացնել անարդարության զգացում:

Բացի այդ, «Փաստաբանության մասին» օրենքը նախատեսում է հանրային պաշտպանների և Երևան քաղաքի դատախազի հավասարաչափ վարձատրություն: Սակայն հանրային պաշտպաններ նշում են, որ վարձատրությունը հավասարաչափ չէ:



Այս առիթով հանրային պաշտպաններից մեկը նշում է. «Մի ժամանակ օրենքը էսպես էր, որ հանրային պաշտպաններին փոխհատուցում տրվում է Երևան քաղաքի համայնքի դատախազի վարձատրության չափով: Երևան քաղաքի մասին օրենքը դուրս եկավ 2010 թվականին. Երևանը ինքը դարձավ համայնք: Բայց փաստաբանության մասին օրենքը մնաց նույնը, այսինքն, եթե տառացիորեն օրենքը կարդանք, մենք հիմա պետք է վարձատրվենք Երևան քաղաքի դատախազի վարձատրության չափով, որը մեզ չեն տալիս: Եվ ոչ ոք դրան ուշադրություն չի դարձնում: Բացի այդ, դատախազներին տրվում են աշխատանքային ստաժի և կոչման համար նախատեսված հավելյալ ճարներ, իսկ մեզ՝ ոչ»:

Հանրային պաշտպանները նշում են, որ աշխատավարձի բարձրացումը կլուծի նաև ճանապարհաճախսերի և հեռախոսագանգերի հետ կապված ծախսերի խնդիրը, քանի որ, ինչպես իրենք են նշում, իրենց աշխատավարձի 30-40% ուղղում են աշխատանքային պարտականությունների իրականացմանը:

### **Պաշտպանների կրթական կարիքները**

Դասընթացների անցկացման հաճախականության և բազմազանության վերաբերյալ հանրային պաշտպանների կարծիքները հակասական են: Նրանցից ոմանք նշում են, որ իրենց առաջարկվող դասընթացները բազմաթիվ են և իրենք են ընտրում, թե որ դասընթացներին մասնակցեն: Ոմանք նշում են, որ ներկայումս շատ քիչ դասընթացներ են անցկացվում կամ ընդհանրապես չեն անցկացվում, իսկ եղած դասընթացներն էլ համարժեք չեն իրենց կարիքներին, քանի որ նույն, կրկնվող թեմաների շուրջ են: Այնինչ օրենքի նոր փոփոխություններից հետո թեմաների բազմազանությունը և դրանց շուրջ անցկացվող նոր դասընթացներն անհրաժեշտություն են:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարևորել է դասընթացների կազմակերպումը Երևանից դուրս, ինչը, ըստ նրա, հնարավորություն կտա պաշտպաններին կտրվելու ծանր աշխատանքային առօրյայից և հանգստանալու:

Բացասական է համարվել այն հանգամանքը, որ եթե նախկինում հանրային պաշտպանների համար հատուկ դասընթացներ էին կազմակերպվում՝ հարմարեցված նրանց կարիքներին, ապա այժմ հանրային պաշտպանները մասնակցում են ընդհանուր

փաստաբանական վերապատրաստումների: Ներկայումս միայն հանրային պաշտպանների համար իրականացվող դասընթացներն էապես նվազել են:

Հանրային պաշտպանները նշել են մի շարք թեմաներ, որոնց վերաբերյալ դասընթացների իրականացման կարիք են տեսնում: Դրանք են.

1. Նախադեպային որոշումներ (Եվրոպական դատարանի նոր որոշումները)
2. Խափանման միջոց կալանքի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպերը
3. ՄԻԵԿ պահանջների կատարման դատական պրակտիկան գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառման բնագավառում
4. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ
5. Հարկային գործեր
6. Տրանսպորտային հանցագործություններ
7. Ավտոճանապարհատրանսպորտային պատահարներ
8. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ
9. Նյութական բնույթի գործեր (նյութական իրավունքի շրջանակներում)
10. Վճռաբեկ բողոքի առանձնահատկությունները և վարույթը վճռաբեկ դատարանում
11. Ապացույցների գնահատումն ու ապացույցների անթույլատրելիությունը
12. Մասնավոր անձանց հարցումները որպես ապացույց վարույթն իրականացնող մարմնի կողմից ընդունելու պրակտիկան
13. Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները
14. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկան՝ կապված դատարանների անկախության սկզբունքի խոցելիության հետ
15. Օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությունում որպես անչափահասի իրավունքների ու օրինական շահերի պահպանման երաշխիք
16. Վտանգավորության ռեցիդիվի կիրառումը

17. Պատիժների հաշվակցումը արագացված դատաքննության ժամանակ, երբ անձը մի քանի հոդվածներով է դատապարտվում

Պաշտպանների կողմից նշվել են նաև մի շարք թեմաներ, որոնք վերաբերում են առավել գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը: Դրանք են.

1. Պաշտպանի հոետորական հմտությունների և բանավոր խոսքի զարգացումը
2. Փաստաբանի և վստահորդի փոխադարձ վստահության ձևավորումը՝ որպես վերջինիս մեղսագրաված հանցավոր արարքը հերքելու, հանցագործության կատարման պատճառների, նպաստող պայմանների, դրդապատճառների բացահայտման, մեղմացնող հանգամանքների վերհանման երաշխիք
3. Նախաքննության և դատաքննության ընթացքում ՄԻԵԴ և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ տվյալ բնույթի գործերով նախադեպային որոշումների վկայակոչումներն իրականացնելը որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից օրինականության ապահովմանը պարտադրելու երաշխիք

Հատկապես կարևորվել են մարզերում գործող հանրային պաշտպանների կրթական կարիքները: Վերջիններիս համար կարևորվել է մեթոդական օգնության տրամադրումը, օրենսդրական նորույթների վերաբերյալ սեմինարների և դասախոսությունների անցկացումը, դատական, դատախազական և քննչական մարմինների ղեկավար պաշտոնատար անձանց հետ հանդիպումների, բանավեճերի կազմակերպումը:

Հետազոտության մասնակիցները կարևոր են համարել հանրային պաշտպանների միջև փորձի փոխանակման կազմակերպումը՝ ինքնաուսուցման եղանակով: Ըստ նրանց, ներքին հաղորդակցությունը հաճախ տուժում է պաշտպանների ծանրաբեռնվածության (ազատ ժամանակի բացակայության) և մարզային պաշտպանների հետ կայուն կապի բացակայության պատճառով: Կարծիք է հնչել այն մասին, որ ներքին հաղորդակցության ինտենսիվացումն ու կայուն շփումը փորձառու հանրային պաշտպանների հետ կնպաստի կարողությունների զարգացմանը:

**Օժանդակ անձնակազմում օգնականի ներգրավման կարիքը**

«Փաստաբանության մասին» օրենքի փոփոխություններով նախատեսված է նաև օժանդակ անձնակազմի գործառույթունը: Մակայն, ըստ հանրային պաշտպանների, օժանդակ անձնակազմում չի ներառել օգնականի հաստիքը, ինչը շատ կարևոր է: Այս կապակցությամբ հանրային պաշտպաններից մեկը նշել է. «Օգնական որ լինի, շատ լավ կլինի: Մեր գործերով մենք ենք վարույթներ կազմում, հանձնում: Այսինքն, կողքից որ նման բաները օգնեն՝ շատ կհեշտանա: Մենք մտածելու բաները կանենք»:

Մեկ այլ հանրային պաշտպան ավելացրել է. «Մենք շատ ժամանակ ենք ծախսում տեխնիկական հարցերի վրա, որոնք կարող են անել օգնականները, ստաժորները, իսկ հանրային պաշտպանները այդ հարցերի վրա չպետք է ժամանակ ծախսեն: Օրինակ՝ վերաքննիչ բողոքի մուտքագրման վրա շատ ժամանակ է ծախսվում. հանրային պաշտպանը ինքն է ստիպված լինում գնալ-հասնել Վերաքննիչ դատարան կամ գործ մուտքագրել Վերաքննիչ դատարան, երբ նույն գործողությունը կարող է կատարել օգնականը: Կամ՝ միջնորդություններ է ներկայացնում քննիչին, ինչի համար (գնալ-գալու) ահագին ժամանակ է ծախսվում, երբ այդ ժամանակը կարող է ծախսել կոնկրետ հայցադիմումներ կազմելու, վերաքննիչ բողոքներ մշակելու և իր աշխատանքային գործունեության համար»:

Այսպիսով, օժանդակ անձնակազմում օգնականի հաստիքի ներառումը թույլ կտա նվազեցնել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

### **Բացահայտված կարիքների բավարարմանն ուղղված առաջարկություններ**

Հաշվի առնելով վերը նկարագրված կարիքները՝ ներկայացնում ենք դրանց հաղթահարման հետևյալ առաջարկությունները:

1. Կարգավորել հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության հարցը, պաշտպանների միջև գործերի առավել համաչափ, կանխատեսելի և արդյունավետ բաշխում ապահովել: Օրենսդրորեն ամրագրել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության սահմանները:
2. Ներդնել հանրային պաշտպանների վարձատրության նոր մեխանիզմ՝ հիմնված ինչպես գործերի քանակի, այնպես էլ դրանց բարդության աստիճանի վրա:
3. Ապահովել հանրային պաշտպանների միջև ներքին կայուն հաղորդակցությունը և փորձառու պաշտպանների կողմից փորձի փոխանցումը երիտասարդներին:

Ապահովել մարզային պաշտպանների կանոնավոր և պարբերական այցելությունները հանրային պաշտպանի գրասենյակ (Երևան)՝ փորձի փոխանակման և պրակտիկ խնդիրների քննարկման նպատակով:

4. Հանրային պաշտպանի գրասենյակի կապը վարույթն իրականացնող մարմինների և մարզերում գործող հանրային պաշտպանների հետ ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով, օրինակ՝ ֆաքսով:
5. Ներդնել հանրային պաշտպանի օգնականի հաստիքը՝ նախապատվություն տալով նորավարտ երիտասարդների ներգրավմանը:
6. Ապահովել իրավաբանական կրթություն ստացող ուսանողների մի մասի պրակտիկայի կազմակերպումը հանրային պաշտպանի գրասենյակում, որտեղ վերջիններս, փորձի ձեռքբերմանը զուգահեռ, նաև օգնականի պարտականություններ պետք է իրականացնեն:
7. Իրավաբանական ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողների համար սահմանել պարտադիր կամ կամընտրական մասնակցություն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը:
8. Հանցագործության ծանրությունից ելնելով՝ սահմանել անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքի համար վճարունակության տարբերակված չափանիշներ: Անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու համար ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում սահմանել անվճարունակության ավելի բարձր շեմ, քան ավելի ծանր հանցագործությունների դեպքում:
9. Ապահովել հանրային պաշտպանների պարտադիր պարբերական վերապատրաստումը:
10. Հանրային պաշտպանների վերապատրաստումներն իրականացնել նրանց կրթական կարիքների գնահատման հիման վրա:
11. Հատուկ դասընթաց իրականացնել հանրային պաշտպանների համար՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նոր փոփոխություններին և դրանց հետևանքներին ծանոթացնելու համար:

12. Հանրային պաշտպանի գրասենյակին տրամադրել ավտոմեքենա և ներդնել վարորդի հաստիք՝ հանրային պաշտպանների անարգել և արագ տեղաշարժն ապահովելու համար:
13. Ներդնել պաշտպանների տրանսպորտային, բջջային և ինտերնետ կապի և աշխատանքային գործունեությունից բխող այլ հնարավոր ծախսերի փոխհատուցման ճկուն մեխանիզմ:
14. Կիսամյակային ամփոփումների արդյունքներով խրախուսել լավագույն հանրային պաշտպաններին և նրանց ձեռքբերումների մասին շրջափերական նամակով իրազեկել մյուս հանրային պաշտպաններին: